

# 11. ՁԱՆՁԻԼ ԿՌԱՆ

Կէլնի մեյ թակավոր. մեյ լաճ ու ախչիյ մ'ունի:

Մեկ փարուց սորա լաճուն կասի. - Ձիկ շատ դյուշման կա, որ ես կմեռնեմ, կուգյան կռիվ կուգեն, բիրդան չասես՝ ես պատրաստ եմ:

Թակավոր կմեռնի: Դսե-դյուս թակավորներ կուգյան կասեն. - Մենքյ կռիվ կուգենքյ:

Կասի. - Խա՛, ես պատրաստ եմ:

Կուգյան կռիվ կանեն, դեխեն-դեխեն կուտան վերեն: Կգանեն, կավիրեն քյաղքյըներ: Ուր քյաղքյընն էլ կառնեն:

Կմնան քյոր վ'ախպեր:

Թակավորներ կասեն. - ի՞նչ անենքյ, էս լաճուն սպանե՞նքյ:

Մեյ կասի. - Չի սպանենքյ, թալենքյ գյեր:

Մեյ կասի. - Չի թալենքյ գյեր, թալենքյ խոր:

Մեյ կասի. - Ոչ թալենքյ գյեր, ոչ թալենքյ խոր, մեյ կտիր ոխչար տանքյ ծեռ, քյաղքյիս խանենքյ տյուս:

Կառնի ոչխար, խեր ուր քյուրոչ կինեն ճամբախ, կէրթան: Կէրթան մեկ սարի մը մեչ, էտա տեղ պստիյկ տու'մ կշինեն, կմնան: Մեյ քյանի մ' օր, լաճ ոխչար կտանի, կարածա, կպիրի, ինոնց իդարեն վեր ոխչրին ի:

Ավուր մեկ կառնի մեկ կողմ կէրթա: Տանի կէրթա չիմանի մեչ, ենտեղ կարածա: Կէսօրի վախըտ կտիսնա ախպրիս դավրեշըմ տյուս կէլնի, իրեյքյ խա շնով:

Կուգյա լաճու մոտ, կասի. - Պարև՛ քյե:

Կասի. - Աստծու պարի՛ն:

Դավրեշ կասի. - Ոխչար խե շներաց փոխենքյ:

Լաճ կմտածի, կասի. - Քյանձ զի ճոչ կա, էրթամ պատասխան

պիրեմ առատուն, տա՛մ:

Էն իրիկուն կուգյա տուն լաճ, քյուրոչ կասի. - Դավրեշ մէկավ կասի՝ ոխչար խե շներաց փոխենքյ:

Կասի. - Քյո խոր վոսիաթ չպոնիցիր, որ թակավորներ կուգյան կոիվ կուզեն, ամսով օր ուզի, տարով օր ուզի, չուր քյո պատրաստութեն տիսնաս: Տյու էն վոսիաթ չպոնիցիր, ասիր. խա՛, ես հազըր եմ, կոիվ կանեմ, մկա քյաղքյըներ տյուս տվեցիր, ժողովուրթն էլ տյուս տվիցիր, մկա մեր իդարեն ոխչարն ի, մեր իդարեն կտրես, կուտաս շներ կառնես:

Քյոր էս պատասխան կուտա լաճուն: Էն իրկուն կմնա, առատուն լաճ կէլնի, ոխչար կառնի, կէրթա արածալ: Կիրիշկա կեսօր դեխ էլմ դավրեշ շներաց խետ կուգյա:

Կասի. - Պարև՛ քյե:

Կասի. - Աստծու՛ պարին:

Կասի. - Պատասխան պիրի՞ր:

Կասի. - Մտես կնաց, չկարցա ասիր ի: Վաղ մայան պատասխան կպիրեմ:

Դավրեշ կասի. - Շա՛տ աղեկ:

Դավրեշ կթողնի կէրթա: Չուր հ'իրկուն լաճ կմնա ոխչար կարածա, ե'իրկուն ոխչար կառնի, կուգյա տուն: Ոխչար կթեն, կուտեն:

Քյուրոչ կասի. - Իմ աչն ընգյե էն շներ, ես ոխչար կուտամ, շներ կառնեմ:

Կասի. - Տյու կիտես, մեր իդարեն էն ոխչարն ի:

Իրիկուն կքյընեն, առատուն ոխչար կառնի կէրթա: Չում կեսօրին կաչքի, դավրեշ կուգյա շներաց խետ, կուտա ոխչըրներ, շներ կառնի, լաճ կառնի քիչըմ ճամբախ կուգյա:

Քիրդան միտ կինի, կասի. «Շներաց անուն ի՞նչ ի, չխարցուցի»: Ետ կտառնա, կտիսնա դավրեշ ոխչար կընցուցի մեչ հախպրին:

Կասի. - Դավրեշ բաբա, շներաց անուն ի՞նչ ի:

Կասի. - Մեկ՝ Զանջիլ կոան, մեկ՝ Խաբարապեր, մեկ՝ Քեռշկող:

Շներ ետ կառնի, կուգյա: Կուգյա տուն, տեսնա որ քյոր կասի. - Մենքյ անոթի, շներ անոթի, մեր հալ ի՞նչխ կընի:

Պառկեն կքյընեն, առատուն Զանջիլ կոան, կուգյա վեր տռան, տուռ կտտի, կասի աղեն.- Վո՞վ ի:

Կասի. - Աղա, էլի վեր, տյու անոթի, մենքյ անոթի, էլի՛ էթանքյ:

Կասի. - Դո՞ր էթանքյ:

Կառնեն կինեն ճամբախ, կէրթան: Մտածելեն կէրթան:

Կասի. «Ջանըմ, շներ զի դո՞ր կտանեն, զի պիտի տանեն ուտե՞ն, ի՞նչ պիտի անեն»:

Խեր իսոնց վախվխելեն կերթա: Շա՛ կերթան, քիչ կերթան մեյ դաշտի մեչ, մեկ ծառըմ կա էր դաշտի մեչ:

Կասի. - Աղա՛, կա՛ց էսա ծառի տակ:

Ձանջիլ կռան ընգյերներաց կասի. - Խաբրապեր, Բեռշլկող, երթանք սար ավ անել:

Մինչև իրիկուն կժողվեն խազար խա ջանավար, գյել, աղվես, խազալ, կառնեն կուգյան:

Կուգյան, հալա չխասած աղին, աղեն կտիսնա, կվախենա: Վախենելուց ծառ կելնի:

Ձանջիլ կռան կասի. - Խաբրապեր, կնա՛ խասի մեր աղին, ասա, թո չվախենա, ծառ էլնի:

Խաբրապեր կխասնի մոտ աղեն, կասի. - Աղա՛, աղա՛, մ'էլնի ծառ: Մի վախենա, եճի՛ տակ:

Աղեն կեճնի տակ: Ինչքան էլ ծառից կեճնի տակ, պայց սիրտ կտռղա: Կուգյան կխասնեն մոտ աղեն:

Ձանջիլ կռան կասի. - Արե՛ մոտիկ, խեր իմ կշտին:

Կինեն ճամբախ, կուգյան: Կուգյան կխասնեն տուն:

Ձանջիլ կռան կասի. - Աղա՛, կնա՛ քյնի:

Աղեն կերթա կքյնի: Ձանջիլ կռան կասի. - Խաբրապեր, Բեռշլկող, պիրենք ջանավարներ անենք փոսթ, որն ինչ ուտելու ին, ուտենք, որն ինչ չորցուցելու՝ չորցուցինք:

Մինչև առատուն փոսթեր կչորցուցեն, կապեն կանեն դանգ: Ձանջիլ կռան կերթա աղի տռան վերեն, տուռ կտփի:

Աղեն ծեն կուտա, կասի. - Ի՞նչ ի, Ձանջիլ կռան:

Կասի. - Էլի վե՛ր, աղա, արե՛ տուռ պայ:

Տուռ կպանա, կելնի տյուս:

Ձանջիլ կռան կասի. - Արի երթանք փոսթեր տանենք ծախենք:

Աղեն կերթա կտիսնա, տիսնա որ դանգ կապիր են:

Կասի. - Շատ աղեկ, է, ինչո՞վ տանենք:

Կասի. - Մեր Բեռշլկող ինչի՞ խամար ի:

Պիրեն կպառնան՝ Բեռշլկողին, աղեն կխեծուցեն վերեն, կինեն ճամբախ, կերթան: Կերթանք կխասնեն մո քյաղաքյ:

Ձանջիլ կռան կասի. - Ամեն մեկ փոսթ երկու ոսկուց պակաս չի տաս:

Կերթան կմտնեն մեչ քյաղքյին, թյուջրներ կուգյան փոսթ առնիլու: Կուգյան մեմեկ մեյ ոսկի կուտան փոսթեբաց:

Աղեն կասի. - Պակաս չեմ իտա երկու վուսկուց:

Մահաթիմ կաղար կմնան, մեկ թյուջարըմ կուգյա դա: Կասի. - Քյանի՞ յի փոսթեր:

Կասի. - Մեկ փոսթ երկու ոսկի յի:

Կուտան էր թյուջրին: Կխամբրեն, թաստիմ կանեն, փարեն կխամբրեն, թաստիմ կառնեն, կէլնեն կէրթան չարշին ֆոալ:

Ձանջիլ կոան կասի. - Աղա, քիչըմ ուտելիս պան առնենք, թե խաստիս, թե մսիս, թե ինչիս, պառնանք Բեռշկոդին:

Կառնին, կինեն ճամբախ, կուգյան:

Կխասնեն տուն: Քյուրոչ կասի. - Կեր իփի ուտենք:

Քյոր կէլնի կեր կիփի: Առաճի թեփսին շներաց կուտան, նոր մնացած ինոնք կուտեն:

Շներ կթողնեն, կէրթան ուրենց տեղ:

Կասեն. - Տեսա՞ք, մեր աղի մարիֆաթ, մեր աղեն առուճի կեր մե իտուր:

Աղեն ու քյոր կպառկին: Առատուն կլուանա, Ձանջիլ կոան կուգյա վեր տոան, տուռ կտփի: Աղեն ձեն կուտա: Ձանջիլ կոան կասի. - Էլի վեր, արե՛ տյուս:

Կինեն ճամբախ էլմ կէրթան: Կէրթան կխասնեն էտ չիմանի մեչ, էն ծառի մոտ, կթողնեն աղեն դա, կէրթան, մինչև իրիկուն կժողվեն էլ մ'էլ ջանավարներ կպիրեն: Կուգյան կխասնեն տուն, ուրենց խաս-մաց կուտեն: Աղեն, ինոնք կպառկեն, կքյնեն: Շներ բաշլայեն էլմը փոսթ անել:

Մինչև առատուն կչորցուցեն, կանեն դանգյ կապեն, առատմե Ձանջիլ կոան կէրթա վեր աղի տոան, տուռ կտփի, կասի. - Աղա՛, էլի էրթանք:

Աղեն կէլնի տյուս: Կէրթա փոսթեր կտիսնա, պառնան Բեռշկոդին, աղեն կխեծուցեն վերեն, կինեն ճամբախ, կէրթան: Կէրթան կխասնեն քյաղաք: Էլմ'էլ էն թյուջար կուգյա, փոսթեր կառնի կտանի: Խամբրեն, թաստիմ կանեն թյուջրին փոսթեր: Փարեն կառնեն մոտեն, կոտան գինա քիչըմ խաց-պանի, ուտելիսի, կուգյան խասնեն տուն: Կեր-մեր կիփեն, կուտեն: Աղեքյ, ինոնքյ կպառկեն քյնեն: Ձանջիլ կոան, շներ կէլնեն տյուս:

Ձանջիլ կոան կասի ընգյերներաց. - Վաղն էլ էրթանք, ջանավարներ պիրենք, մեր աղեն հարուստացուցենք:

Ինոնքյ էլ կպառկեն տյուս կքյնեն, առատուն լուսնա, կուգյա աղի տոան վերեն, տուռ կտփի, աղեն ծեն կուտա:

Կասի. - Աղա, էլի՛ վեր:

Աղեն կէլնի, խալավ կխայնի, կէլնի տյուս:

Կասի. - Աղա, էրթանք, էսօր էլ էրթանք պիրենք:

Կինեն ճամբախ, կէրթան: Կէրթան կխասնեն մոտ էն ծառ, աղեն կթողնեն մոտ ծառ, շներ կէրթան, չուր իրիկուն էլմ'էլ խազար խա ջանավար կառնեն, կուգյան մոտ աղեն, կինեն ճամբախ, կուգյան:

Կուգյան կխասնեն տուն, կեր-մեր կիփեն կուտեն, շներ կուտեն

առաճին, կէլնեն տյուս, նոր աղեն, քյոր խաց-կեր կուտեն: Էտ իրիկուն պառկեն, կքյնեն: Զանջիլ կռան, շներ պաշլայեն ջանավարներ փոսթ անել:

Զուր առատուն փոսթեր կչորցուցեն, կապեն կանեն դանգյ: Զանջիլ կռան կուգյա վեր տռան: Տուտ կտփի, աղին կխանի վեր: Աղին կասի՝ էլի՛ տյուս:

Տուտ կպանա, կէլնի տյուս: Կէրթան էն փոսթեր կպառնան, կէրթան: Կէրթան կխասնեն քյաղաքյ, կէյնին մեչ քյաղքյին, էտ թյուջար կուգյա էլմ, փոսթեր կառնի, կտանի: Կխամբրեն, թասլիմ կանեն, կուգյան կխասնեն տուն, կեր-մեր կիփեն, էն իրիկուն կուտեն, առաճին գյենա շներ կուտեն, աղեյին էլ կուտեն, կպառկեն կքյնեն: Զուր առատուն արև կառնի, նոր աղեն կէլնի տյուս: Կտիսնան որ շներ էլմ նստիր են դա՛:

Զանջիլ կռան կասի. - Աղա՛, էրթանքյ ավ անենքյ, պիրենքյ ուտենքյ:

Կէրթան, կինեն ճամբախ, կէրթան: Էրկու-իրեյի խատ ավ կանեն, չուր կեսորին: Կպիրեն կիփեն, կուտեն: Էն կիշերն էլ կքյնեն, էն առատուն կէլնեն վեր:

Ամեն օր դեորիս կէրթան ավ կանեն, կպիրեն, կուտեն:

Վախըտրըմ կմնան էտատեղ:

Ավուր մեկին քյոր կասի. - Ախպեր, մենք մնանքյ էստեղ վայրենի կէլնենքյ:

Ախպեր կասի. - Ապա դո՞ր էրթանքյ:

Կասի. - Մենքյ էտեյի հարսըտացանքյ: Էթանք քյաղքյի մոթքեր, շենլընգի մոթքեր: Տուն շինենքյ, էնտեղ մնանքյ:

Կասի. - Շատ աղեկ:

Մեկ, էրկու, իրեքյ օրիս սորա կէլնեն ուրենց էլած-չէլած կպառնան Բեռշլկոդին, կինեն ճամբախ, կէրթան: Շատ կէրթան, քիչ կէրթան, կէրթան կխասնեն մեյ դաշտիմ մեչ: Տիսնան որ մեյ քոչկ ու սարեմ կա, չուտես, չխմես, թամաշա անես: Էտատեղ, ախպեր կէրթա կմտնի սարի մեչ, կֆռա, կտիսնա որ մարթ չկա:

Քյուրեոչ կասի. - Զանճ էսա տուն ավելի աղեյ չենքյ կանա կընդնի:

Կմնան էտա տեղ: Իրիկուն էտատեղ կպառկեն տան մեչ, առատուն, աղեյն կէլնի, շներ կառնի, կէթա ավե, իրիկուն կուգյա տուն, իրիկուն կքյնեն, առատուն էլմ կէլնեն վեր: Ամեն օր կէրթան ավե, միջոցըմ կադար:

Ավուր մեկին ախչիյ կասի. «Էսկանդար օր էսա տան մեչն եմ, մեկ օր էսա տան մեչ չեմ ֆռայեր»: Կէլնի տան մեչ ֆռալ: Վիրին կաթ կֆռա, պա՛մ չտիսնա: Կէլնի ցածրի կաթ, կֆռա, կէրթա մեյ

տեղը, կտիսնա, որ մեկ պոնիմ՝ մեչ ճաղցի քյար տրուկ պերնի առաչ, մեկ ճոթից դև գյլեռխ խանի տյուս:

Կտիսնա որ ախչիկ պիտի քյաշվի եր, դև կկանչի ախչկան: Ախչիյ կերթա մոտ: Դև ախչկան սիրտ կշահի: Մեկ միջոցը կմնա մո՝ դև, խաբար կուտան:

Դև կասի. - Արե, քյո ախպեր կուրիսցու՛, որ ես էսա ծակից տյուս էլնեմ:

Ախչիյ կասի. - Աղեկ, ինչպե՞ս կուրիսցուցեմ:

Կասի. - Ես տեղ սավրցուցեմ, ըսկուն ասա. կխիվընդնաս, իրիկուն ախպերտ կուգյա տուն, տըյիտրքյալեն կնա տուտ պաց: Որ կասի. «Քյոր, քյե ի՞նչ ի էլի, ի՞նչ կուզես, ի՞նչ չեսվ ուզե», ասա. «Կնա յոթ սարով էն դեխ, բախչեմ կա, կնա՛ էն բախչից մեյ ճութ խաղող պի»: Իմ ճոչ ախպեր դա՝ յի, բալքյի ինոր գայ՝ անի:

Ախչիյ կելնի կուգյա ուր էոդեն, իրիկուն ախպեր կուգյա: Կուգյա տուտ կտտի, տիսնա որ քյոր անգյան կուգյա տուտ կպանա: Քյոր տրյիտրքյալեն կուգյա տակ, տուտ կպանա:

Կասի. - Քյո՛ր, տյու ընչի՞ կտրքյաս:

Կասի. - Ես խիվանդ եմ:

Մտնի քյուրոչ թև, կանոնի կերթա էոդեն:

Կասի. - Քյո՛ր, ի՞նչ կուզես, ընչի՞ խիվընդյուր:

Կասի. - Խիվընդյեր եմ, ընչի՞ պիտի:

Կասի. - Ի՞նչ կուզես:

Կասի. - Էրթաս յոթ սարով ընցնես, էն տեղ իգյիմ կա, էն իգյու մեչեն պստիյ ճութը խաղող պիրես զի խամար:

Էն իրիկուն կքյընի, առատուն կելնի վեր, կինի ճամբախ, կերթա: Շներ խե չտանի: Կերթա յոթ սար կընցնի, կեյնի դաշտիմ՝ մեչ, կերթա կխասնի մոտ իգյին, մտնի մեչ իգյուն, ճութ խավող բաշլայի քյաղել: Քյաղի պրծնի կկապի մեչ սլնախին, տիսնա որ մեյ քյամիմ, էորյում-փեռթեորյում կանի, կուգյա: Տիսնա որ դամ՝ի կուգյա:

- Հե՞յ վախ, - ասաց, - դև զի կերավ:

Մեկել Ձանջիլ կոան միտն իյնելուն պես. - Ա՞խ, - ասաց, - Ձանջիլ կոան, ես որտե՞ղ կընդնեմ քյե:

Ասելուն պես Ձանջիլ կոան, ուրիշներ կխասնեն: Ձանջիլ կոան դևուն փարչալամիշ կանի, մեմեկին մեյ կտոր կխասնի:

Դևուն կսպանեն, կտրթնեն, կելնի խավող խեր շներաց կառնի, կուգյա: Քյոր կնացե մո դև:

Դև կասի. - Կնա՛, մկա վախտը ի, կուգյա, - կասի, - իմ ախպեր եթե սպաներ ի, մկա կուգյա:

Ախչիյ կելնի, կուգյա էոդեն, կտիսնա, փենջարից, ախպեր կուգյա խեր շներաց:

Կուգյա, խասնի վեր տռան, տուռ կտփի, քյոր կէլնի տրյիղրյալեն կուգյա տուռ պանա, մտնի քյուրռչ թև:

Քյոր կասի. - Ախպե՛ր, պիրիսի՞ր:

Կասի. - Խա՛, պիրիսի:

Կխանի խավռղ, կուտա իտռր, խավռղ կուտի:

- Օ՜ֆ, - կասի, - սիրտրս քիչրմ ռհնթավ:

Էտ իրիկուն կքյնեն, առտուն լաճ կէլնի վեր, կէլնի շներ կառնի կէրթա ավե:

Էն կէրթա ավե, ախչիյ կէլնի կէրթա մռ դև:

- Դև, - կասի, - էկավ իմ ախպեր:

Կասի. - Հե՜յ վախ, իմ ախպեր սպանեց:

Զուր իրիկուն իտռր մռտ կմնա, իրիկուն ախպռր վախրտ գյալուն, կէլնի կէրթա ուր էռդեն: Ախպեր կուգյա, էտ իրիկուն կքյնեն, առատուն կէլնի որ էրթա ավե մեկ քյանի մ'օր:

Մեյ քյանիմ օրիս սորա, էտա ախչիյ կէրթա, մռ դև, դև կասի. - Մեյ ճամբախ մ'էլ կա: Էն յոթ սարով էն դեխ որ կնայ, ըսկում էլ էն դեխ էրթա իմ ճիչ-ճիչ ախպեր Սիվտայ դև դա՛ն ի: Տյու խիվրնդսի, էլմ'էլ. ախպերտ կուգյա, ասա, էրթա էն տեղեն մեյ խա կլոր պիրի բոստնիս: Բալքյիմ' ճոչ ախպեր ինոր զայ անի:

Ախչիկ իտռր մռտեն կուգյա ուր էռդեն, իրիկուն ախպեր կուգյա տուն, կուգյա վեր տռան, տուռ կտփի, կտիսնա քյոր չի գյա տուռ պանա: Տփելուց սորա կտիսնա քյոր տրքյտրքյալեն կուգյա, տուռ կպանա:

Կասի. - Քյոր, քյե ի՞նչ ի էլի, էլ՞մ խիվրնդսե՞ր իս:

Մտնի թև, կառնի կէրթա վեր:

Կասի. - Քյո՛ր, ի՞նչ կասես, ի՞նչ կուզես:

Կասի. - Վալա, էն յոթ սար որ ընցար, ըսկում էլ էրթաս էն տեխ, մեկ դանշտիմ մեչ տիսնաս մեյ բոստա'մ կա ենտեղ, ենտեղեն կլորրմ պիրես, բալքյի ես ուտեմ, աղեյնամ:

Ախպեր կասի. - Շատ աղեկ:

Ուր գյլխու գյայած քյուրռչ չպատմե, որ դև կա ենտեղրանքյ, զիկ կուտեն, չպատմե. «Դեյի իմ քյոր լսի, վախենա»:

Իրիկուն կքյնեն, առատուն կինի ճամբախ, կէրթա: Էտ յոթ սար կսրռճրվի, կէրթա էն իգյին կրնցնի: Կէրթա յոթ սար էլ կսրռճվի, պայյ շներ խետ չտանիր: Կէրթա կխասնի էտա բոստնի մռտ, մտնի կլորրմ կքյաղի, կապի մեչ ալնրխին, տիսնա որ մեկ էօրյում-փեռթեռրյում կուգյա: Կտիսնա, որ Սիվտայ դև, չանճ էն մեկել դև ճոչ: Համան դև պիտի խասնի վեր լաճուն, բիրդանն Զանջիլ կռան միտ կիսկի:

- Ա՜խ, - կասի, - Զանջիլ կռան, դե՞ր ես, խասի:

Ասելուն պես Զանջիլ կռան, շներ կխասնեն, կզանեն էտա դևուն, մեյ-մեկ մեկ փարչա կխասնի: Կսպանեն կպրծնեն: Կելնի ուր կլոր կառնի, խեր շնեկայ կինի ճամբախ, կուգյա:

Խաբար տանքյ ախչկան մոտեն: Ախչիյն ի, կերթա մո դև:

Դև կասի. - Էսօր քյո ախպեր կուգյա՝ թե իմ ախպորն սպաներ ի, - կասի, - մարիֆաթ քյո ախպոր չի, մարիֆաթ շներայն ի, որ իմ երկու ախպորն էլ կսպանի:

Ախչիյ կելնի կուգյա ուր էօդեն: Տիսնա փենջարիյ. - Վա՜յ, - կասի, - դև սպանեց, ախպերս կուգյա:

Կուգյա կխասնի վեր տռան, տռուռ կտփի, տրքտրքյալեն քյոր կուգյա տռուռ կպանա, մտնի ներս լաճ, մտնի քյուրռչ թև, կառնի կերթա էօդեն:

Քյոր կնստրյուցի: Քյոր կասի. - Ախպեր, պիրի՞ր:

Կասի. - Խա՛, պիրի:

Կխանի ուր կլոր, կկիսի շերտրմ կուտա քյուրռչ, քյոր կուտի, քիչրմ կմնա: Ախպեր կխարյուցի քյուրռչ մոտեն, կասի. - Աղեյյա՞ր, ի՞նչխ ես:

Կասի. - Վալա, քիչրմ սիրտս խովցավ:

Էտ իրիկուն կքյնեն: Էտ առատուն կելնեն վեր. լաճ կառնի շներ, կերթա ավե, ախչիյ կելնի կերթա մո դև:

Դևուն կասի. - Իմ ախպերն էկավ:

Կասի. - Հեյ վա՜խ, իմ ճիչ-ճոչ ախպերն է՛լ սպանեց: Մնացի մենակ ես:

Միջոցրմ կմնան: Ավուր մեկին, դև կմտածի, ախչկան կասի. - Ախչի, կայյաթ խիվրնդցի, որ քյո ախպեր կուգյա կասի. «Ընչի՞ ես խիվրնդցե», տյու ասա. «Կերթաս անմախութնի ճյուր կպիրես. որ չպիրես՝ ես կմեռնեմ»: Բալքյի երթա ենտեղ, էլ չրգյա: Թե ենտեղեն էլ էկավ, էլ չարա չկա ինոր խեր:

Էս դև ախչկան կսավրյուցի, ախչիյ կելնի կուգյա կպառկի ուր էօդեն:

Իրիկուն ախպեր կուգյա, կուգյա խասնի վեր տռան, ախչիկ երկու խա չոր խայ տրե ուր հընթան տկներ, ախպեր տռուռ կտփի, տռուռ կտփի, չի գյա տռուռ պանա: «Զանրմ, - կասի, - չելնի՞ իմ քյոր էլմ խիվրնդցեր ի, չի կանա գյա տռուռ պանա»:

Մեկ է՛լ տռուռ կտփի, տիսնա անգյան կուգյա տռուռ պանա: Ախպեր կմտնի ներս, մտնի թեքեր, կառնի կերթա էօդեն:

Քյոր կասի. - Էլմ ի՞նչ ի էլի քյե, խիվրնդցեր ես:

Քյորն ի, կսրռճվի վեր են մեյ կողին, կտիսնա խռխռոց կուգյա կողիս:

- Յամա՜ն, - կասի, - իմ կող-կուշտ կոտրրոտվավ:

Ախպեր կասի. «Իմ քյոր շա՛ խիվանդ ի»:

Կասի. - Քյոր, ի՞նչ կուզես քյե խամար պիրեմ:

Կասի. - Վալա, պիտի էրթաս զիկ անմախութնի ճյուր պիրես, բալքյի խմեմ, աղեյնամ:

Կասի. - Շա՛տ աղեկ:

Էն իրիկուն կքյնեն, առատուն կէլնի վեր: Կասի. - Քյոր, ես կէրթամ, մինչև քյառսուն օր եթե էկա՛, էկա, եթե չէկա՝ տյու գիտես, ինչ կանես՝ արա էն վախտ:

Կինի ճամբախ, կէրթա, շներ չտանի խետ:

Ախչիյն կէլնի կէրթա մո դև: Ինոնքյ ինոնց քյեֆի մեչ էլնեն. խաբար տանքյ լաճուց:

Լաճ կիյնի ճամբախ, կէրթա: Մինչև տըսնընխինզյ օր շներ կաչքեն, որ՝ մեր աղեն դի՞ր կնաց կուրիսավ: Իրարու կասեն. «Էրթանքյ խասնենքյ մեր աղեն կընդնենքյ. չէլնի մեր աղեն մեյ վտանքի մեչ ինի»:

Շներ կինեն ճամբախ, կէրթան: Վեր տըսնեյոթ ավուր կխասնեն աղին: Աղեն կտիսնա շներ, շա՛ կուրախնա: Սեկ օր էլ ճամբախ կէրթա, կէրթա էտ իրիկուն պստիյ տու՛մ ռաստ կուգյա: Խասնի էտ տուն, տիսնա որ պառավ կնիյմ կա դա:

Կասի. - Պարև քյե, մայրիկ:

Կասի. - Հա՛յ իգյիթ, օյն ուր պոռտով, խավքյն ուր թևով ես ճամբախ էրթայող գյայող չկեր:

Կնստի դա: Էտ պառավ կասի. - Դի՞ր կէրթաս:

Կասի. - Վալա, պիտի էրթամ անմախութնի ճյուր պիրեմ, տանեմ իմ քյուրոչ, խիվանդ ի:

Էտ ասելուն պես, պառավ կխասկրնա: - Հա՛յ, - կասի, - քյու սավրյուցողի վիզ փրթնի: Շատ աղեկ, կիշեր քյնի էստեղ, վաղ ուրպաթ ի: Վաղ ինոր օրն ի, որ սար կպայվի, անմախութնի ճյուր կէլնի:

Էտ իրիկուն կքյնի էտատեղ, առատուն կէլնի վեր, պառավ կառնի, կէլնի տյուս, փարչըմ կուտա պառավ լաճու ծեռ:

Պառավ կասի. - Էնա սար կտիսնա՞ս:

Կասի. - Խա:

Կասի. - Էն սարի մեչ ծառ կտիսնա՞ս:

Կասի. - Խա:

Կէրթաս, - կասի, - էն ծառի տայ կնստես: Օր կուգյա կեսօր՝ կկայնես, հազր կայ, կիրիշկաս՝ մեկ քոչ էնդեխեն կուգյա, մեկ՝ ընդեխեն կուգյա, գյլխներ կտփեն իրար, գյլխներ տփելու պես իրար՝ սար կպայվի, տու կտրիճ մնաս, մտնես մեչ էն սարին, տիսնաս ախպյուր ճյուր կչռա, տիսնաս խնձորըմ էլ վըր ախպրի ծառի վերեն,

տյու կմտնես, էս փարչ կլցես, ալալ-աջալա խնձեոր քյաղես, կուգյաս կէլնես տյուս, թե որ շոտ չէլար տյուս, կմնաս մեչ:

Լաճն ի, կինի ճամբախ կէրթա: Կէրթս կխասնի էն ծառի մոտ, կնստի էտատեղ ծառի տակ, չուր՝ օր գյա կեսօր: Կտիսնա որ օր կուգյա կեսօր, կէլնի փարչ կպրոնի ծեռ, հազրը կմնա, տիսնա որ քոչ էն դեխեն կուգյա, մեկել ըսդեհեն կէրթա, ինոնքյ կխասնեն գյըյխներ իրարու տփելու: Գյըլխներ տփելու պես, սար կպայվի, լաճ վազեվազ մտնի մեչ սարին, խասնի վեր ախպրին, ճյուր կլցի, խնձեր կքյաղի, կուգյա որ էլնի տյուս: Ոտ սարիկ կքյաշի տյուս, սար կքոծվի:

Կառնի կուգյա մո պառավ, կիշեր կմնա էտատեղ, էն առատուն կէլնի վեր:

Պառավ լաճուն կասի. - Մեր քյաղաքյ մե թակավոր կա, էսա կանաղախ ճյուր լյես, տանես էրթաս էն թակավուրուն, տարին մեյ մարթ էս ճրի խամար զայ կանի: Էտ թակավոր խիվանդ ի, գյոտայի, իկե իրար: Էս ճյուր տանես, էրթաս էտ թակավուրու ջանդայ լվաս, քիչմ'էլ լյես պերան, էն կժրի:

Էտ լաճ կառնի կէրթա էտ ճյուր: Պառավ լաճուն կճամբխի: Պառավ կէլնի մնացած ճյուր կփոխի, ուրիշ ճյուր կլցի փարչի մեչ: Խնձոր կպախի:

Խաբար տանքյ լաճուց: Լաճ կինի ճամբախ կէրթա, կխասնի մեչ քյաղքյին, թակավուրու տուն կխարցուցի: Կէրթա մոտ թակավոր, տիսնաս որ թակավոր գյոտացե, մնացե: Լխեֆ-մխեֆ կչլտի կթալի դեն, ջանդակ էտ ճրով կպոտի, կլվա, էնպես կպոտի, կսիվկնա, ճյուր կլցի պերան, թակավոր կչըղչըփվի, աչքեր կպայվի, կէլնի վեր: Էնպես որ տըսնըխինգյ տարեկան ջիել:

Թակավոր որ կտիսնա, գինքյ կլավանա կիլնի վեր, լաճուն յախալամիշ կանի:

Կասի. - Արե, իգյիթ, գի մեկ ախչիյմ կա, իմ ախչիկ, - կասի, - տամ քյե, տյու իմ տեղ թակավոր:

Կասի. - Ես քյո տեղ թակավորութեն չեմ կանա անե: Ես քյորմ ունեմ, պիտի էրթամ իմ քյորն ազատեմ:

Կասի. - Չեմ թողնի պայ, տյու էսքան աղեկութեն արիսիր գիկ, ես հեչ կթոնե՞մ:

Կանի, չանի թակավոր՝ վեր էտ լաճուն չկանա:

Կասի. - Որ կէրթաս, ախչիկ նշանի քյե խամար:

Լաճ կպիրի նշան կուտա ախչկան, ախչկա նշան կառնի մոտեն: Էրկու օր կմնա թակավուրու տուն, էրկու օրիս սորա կինի ճամբախ կէրթա, կխասնի մո պառավ:

- Պարև քյե, պառավ:

Կասի. - Աստծու պարին:
Կխարցուցի, կասի. - Ի՞նչխ արիր:
Կասի. - Վալա, թակավոր ժըրցուցի:
Կասի. - Շա՛տ աղեկ արիցիր: Տարին մեկ մարթ զայ կըլներ ինոր էն էլ փրթուցիր:
Ճյուր կառնի պառվու մոտեն, կինի ճամբախ, խետ շներուն կերթա: Կերթան քիչըմ կզատանան պառվու մոտեն, պառավ կելնի տյուս, Ձանջիլ կռանին կկանչի:
Կասի. - Առ ես ճյուր, տի քյոր լեզվի տակ, էսա քյառսուն օր ի մեյ թուր կսրին, կերթաս կխասնես վեր տռան, թուր վեր տռան կկախեն, տուռ պանցվելուն պես կելնը քյոր աղի գյլխու վերեն չուր տայ կճղի: Տյու ինոր կշտի խետ կայնես, որ էն մեկ յան ենդեխ կերթա, մեկ՝ ենդեխ, տյու խասնիս յաներ տաս իրար, քյոր լեզվի տկեն ճյուր խանես, լյես էն գյլխու վիրվեն, էն կկպուցի իրար, մեյ կտոր էլ լյես պերան, խմըցուցես, քյոր աղեն էլմ առաճվան աղեն: Մեկել քյոր աղեն ինչ վախըտ նեղ կինի, կամ մեռած կելնի, տյու գյաս մո զիկ:
Ձանջիլ կռան կինի ճամբախ, կերթա խասնի աղին: Կինեն ճամբախ կերթան, մինչև եռեսունևին օր կթըմըմի: Մեկ օր կմնա որ քյառսուն թըմըմի, կխասնեն ուրենց սահման: Մեկ օր մնայե որ պիտի խասնեն տուն, չուր վերճնայ կերթան: Կտիսնան դև, ախչիկ փենջարիս:
Կասի. - Քյու ախպերն էկավ:
Էտ թուր որ կսրեն, տանեն կախեն վեր տռան, կապեն, տուռ պանալուն պես որ եճնի վեր գյլխուն:
Դև կերթա մտնի ուր պոն: Լաճ կուգյա վեր տռան, Ձանջիլ կռան կայնի խետ ուր աղի կշտին:
Տուռ կտփի, կտիսնա քյոր տըքտըքյալեն կուգյա տուռ կսյանա: Տուռ պանալուն պես թուր կեճնի տղի գյըլխուն, կճղի: Ճղելուն պես Ձանջիլ կռան կխասնի, կուտա իրար, կահիմցուցի:
- Խաբրապեր, - կասի, - իմ լեզվի տկեն կութին խա՛ն տյուս: Էսա ճյուր լիս վեր իսոր գյըլխուն, գյա տակ:
Մեյ կտոր էլ կլցի պերան: Կտիսնա որ էլ՛մ առաճվան աղեն կայնե մեյդան, տռնիս ներս կմտնի: Քյուրոչ խետ կելնեն վիր:
Քյոր կասի. - Պիրիցի՞ր, ախպեր:
Կասի. - Խա՛:
Կասի. - Մեյ տու խմեմ, բալքյի ժրեմ, աղեյնամ:
Ախպեր կուտա ճյուր, քյոր կխմի:
Կասի. - Քյոր, ժրա՞ր:
Կասի. - Խա՛, ժրա պրծա:

Էրատրեղ կիշեր կմնան: Էն առատրուն կէլնեն վեր, լաճ ոտ շներ կառնի, կէլնի կէրթա ավե, ախչիյն կէլնի կէրթա մո դև:

Մեյ քյանի օր, քյանի օրուց սորա լաճ քյուրոչ կասի. - Էլի մեր թաղքիր տիսի, պատրաստվի: Լվաց-մվաց արա, որ պիտի էրթանքյ:

Քյոր կասի. - Դե՞ր պիտի էրթանքյ:

Կասի. - Ես նշանվիր եմ, ֆլան տեղ, ֆլան թակավուրու ախչկան խետ:

Կասի. - Ջանըմ, մեր տուն խորոտ ի, դե՞ր պիտի էրթանքյ:

Լաճ կասի. - Չէլնի, անպատճառ պիտի էրթանքյ:

Կասի. - Աղեկ:

Օր բեհոր հա կմնան, հա՝ էտ ախչիյ կխապի:

Ավուր մեյ կէլնի վեր, կասի. - Քյոր, շոտ արա, չամաշուր արա, էրթանքյ:

Մեյ քյանիմ՝ օր էլ կխապի: Ախչիյ կէլնի կէրթա մո դև:

Կասի. - Իմ ախպեր զի կտանի, ի՞նչ կասես:

- Է՜հ, - կասի, - քյե կտանի, տյու էլ կնա:

Կասի. - Ապա ի՞նչխ անենքյ:

Կասի. - Ես քյե կսովրցուցեմ: Գիտե՞ս ինչ պիտի անես: Կուտամ, - կասի, - քյե մեկ դեղ, խետ ախպորդ որ կէրթաս, խարսնիս կանեն, կլմնան, որ էն իրիկուն խարս-փեսեն մնան մեյտեղ, տյու չթողնես ուրիշ մարթ էրթա ինոնց տեղ իսկի, տյու կնա իսկի: Տեղ որ կիսկես, էսա թոզ դեղ կյանես ինոր յաթխի աթրաֆ, էն պառկելու պես կմեռնի, կսիվնա, կէլնի կուտ: Տյու էլ թողնես գյաս զի խասնես:

Ախչիյ կասի. - Շատ աղեկ:

Կառնի դեղ կուգյա մտնի ուրեն էոդեն, ախպեր կուգյա տուն:

Կասի. - Ու՞ր է, լվա՝ց չե՞ս արե:

Կասի. - Էսօր էլ պա՝մ՝ հա՝զըր չկեր, մնաց վա՝ղ, վա՝ղ ա՝նսահին կանեմ:

Է՛ն իրիկուն կքյընեն, առատրուն կէլնեն վեր, ախչիկ կէլնի, կբաշլայի լվա՝ց-մվա՝ց անել: Էրկու օրիյ սորա թա՝ղքիր կտիսնան, կինեն ճա՝մբա՝խ, կէրթա՝ն: Շա՛ կէրթա՝ն, քիչ կէրթա՝ն, կէրթա՝ն կխասնեն էտ քյաղքյի մոտոխաս: Խա՝բա՝ր կէրթա՝ կխասնի թակավուրուն: Թակավոր կէլնի ա՝մր կանի, ա՝սքյրներ կժողվի, չալջիով էրթան տիմնաց:

Կէրթա՝ կխասնի թակավուրու տուն, կէճյուցեն փեսեն ինա՝ն քյոր, կտանեն ներս, էն իրիկուն կմնա, կքյնեն: Էն առատրուն թակավոր կէլնի վեր, բաշլայի խարսընընսի թա՝ղքիր: Էն կիշեր որ խարս-փեսեն պիտի մնան մեյտեղ, էտ իրիկուն, թակավորի կնիյն կուզի ուր փեսի տեղ ինքյ իսկի:

Փեսի քյոր կասի. - Չէ, ջանըմ, ի՞նչ պետք ի տյու էրթաս փեսի

տեղ իսկես: Ջայիզն իմն ի, ես պիտի երթամ իմ ախպոր տեղն իսկեմ:

Կէթա տեղն իսկելու, էտ դեղ կյանի տեղայ աթրաֆ, կուգյա նստի ուր տեղ: Քիչ մ'էլ մնալուց ետ լաճ կէլնի կէրթա որ պառկի, խալավ կխանի, մտնի մեչ յաթխին, պառկելուն պես կմեռնի, կսիվնա, կէլնի կուտ:

Քիչըմ ետ, կէլնեն խարս կառնեն կէրթան էօդեն, խարս էօղից կմտնի ներս, տուռ կքյաշեն վերեն: Խարս կմնա մեչ էօդին, էստեղ կան կուգյա, էնդեխ կուգյա, կտիսնա իրիկ չակխե: Սհաթիմ կադար կմնա, շամաթա կանի, շտիշտոց կանի, բալքյի մարթն ակխի, տիսնա որ մարթ չակխի: Կասի. «Քոշ ի, ես էրթամ լխեֆ պանամ, խենք ընչի՞ չակխե»: Կտիսնա, որ իրիկ մեռեր ի, սիվցե, էլի կուտ: Ծեռքյեր տտի վեր ծիյիվերաց, կասի. «Վա՜խ, էսա ի՞նչ պան էր»:

Կտիսնա որ չարա չկա, կնստի, կուլա: Մտածի, կասի. «Ջանըմ, ի՞նչ պատասխան տամ առատուն իմ խոր-մոր. պիտի ասեն՝ ի՞նչ տեսայ կնիկ էր, մեկ գիշերվան մեչ, մեյտեղվան, իրիկ մեռուց»:

Մինչև առատուն կմնան, թակավուրու ախչիկ տյուս չէլնի էօղից: Կաչքեն՝ արև կպանցրանա, ախչիկ տոնեն տյուս չէլնի:

Թակավուրու կնիյ կէրթա որ խանի վեր, կտիսնա որ ախչիկ էնտեղ նստե, կուլա, աչք-իրես ուռեր ի:

Կխարցուցի, կասի. - Ի՞նչ ի էլե:

Ախչիկ չկանա պատասխան տա, ծեռով կանի: Կէրթա լխեֆ կպանա, տիսնա որ փեսեն մեռե, սիվցե, էլե կուտ:

Ծեռքյեր կտտի իրար, կասի. - Էսա ի՞նչ բալա էր, էսա ի՞նչ տիսանքյ:

Խաբար կտանեն թակավուրուն, որ քյո փեսեն մեռեր ի:

Թակավոր կասի. - Յահ, ի՞նչպես մեռնի, իրիկուն փսայվի, մկա մե՞ռնի:

Կէլնի թակավոր կուգյա, ամր կանի, նաշ կպիրեն, կէրթան գյերեգման կփորեն, տանեն կխորեն:

Իրեքյ օր կընցնի, իրեքյ օրից սորա Ջանջիլ կռան ուր ընգյերներաց կասի. - Մեր աղեն ի՞նչ կանդար բեբախտ էլավ: Մեր աղեն ատաճի անքամ կեր որ կուտեր՝ ատաճի պրտյուճ մե կուտեր: Մտավ կնգյան ծոց, մե մոռցավ: Էս իրեքյ օր ի, որ մե խաց չտվեր ի: Ընգյերներ, էրթանքյ ոսկոռ-մոսկոռ ժողվենքյ, ուտենքյ:

Կինեն մեչ փողընյտերաց, փողընյտրրանքյ կան գյալով կասաբնոց կկնդնեն, տիսնան որ մեյ յան միս կախուկ ի դյուռնից: Ջանջիլ կռան կասի. - Խաբրապեր, էնա մեյ յան միս զա՛ր, տանենքյ ուտենքյ:

Էտ մեյ յան միս որ կզանի, կտանի, տեր կտիսնա: Մսի տեր կամեն կքյաշի, կինի շան իտև:

Մեյ մարթ էլ կխասնի, մսի տիրոչ կպոնի, չթողնի: Կասի. - Դո՞ր կէրթաս, էն շան կզանես, էն շուն որ կա, թակավուրու փեսի շուն ի:

Կասի. - Վիր շուն էլնի, թող էլնի:

Էտ մարթ ինոր չթողնի պայ, կասի. - Ֆեսրզա իր տեր մեռեր ի, անութի են մնայե: Էն շան տեր առաճ խայ շան կիտեր, նոր ինքյ կուտեր:

Զանջիլ կոան կլսի մեռնելու անուն, կխասնի, էտ մարթուն կպոնի: Կասի. - Ու՞ր է, ո՞ր տեղն ի մեռե, տարի՞ր են խորելու:

Մարթ կվախենա. մարթ կառնի կէրթա վեր էտոր գյերեզմնին, տանի ցույց կուտա:

Կասի. - Տե՛ս, որ իմ աղեն չէլավ, քյե կխորեմ իսոր տեղ:

Պաշլայեն քյակել, կխանեն տյուս, պատանքյ կճղեն:

- Է՞հ, - կասի, - կնա խե քյո կործին, մեր աղեն կընդանքյ:

Մարթուն կճամբխեն դեխ ուր կործին: Զանջիլ կոան կէրթա թեխ պառավ:

- Պառա՛վ, - կասի, - ընա մեր աղեն մեռեր ի, ինչ կանես՝ արա:

Պառավ կասի. - Ա՛ռ, էսա փարչ ճյուր տար, խետ էսա խնձորին: Խորոտ ինոր ջան լվաս, որ սիվտընկկուցես, ճյուր կլցես պերան, խնձորն էլ կճղես, կուտաս կուտի:

Զանջիլ կոան ճյուր կառնի, ետ կտառնա կուգյա: Կուգյա վեր աղին: Կասի. - Ընգյերներ, ես ճյուր լցեմ, տյու պուտեքյ:

Կպուտեն, կանեն սիվտայ պամբկի պես:

Կտո'մ էլ ճյուր կլցի մեչ պերնին, կէրթա բողզի մեչ, կտոմ' կընչընչըփի, կտողա, խնձեր կճղի, կուտա պերան, աչքեր կպանա կէլնի վեր:

Զանջիլ կոան կասի. - Խաբրապեր, խասի՛ թեխ խալվըներ, տնեն պե:

Թակավուրու կնիյն տիսնա որ շուն էկավ, մտավ էոդեն, փեսի խալվըներ ատեց, տարավ:

Խաբար կէրթա թակավուրուն, թե շներ քյո փեսեն հ'արեցուցին:

Թակավոր կէլնի խափեխափ կէրթա մո փեսեն: Կէրթա փեսի տիմաց: Խալվըներ կխագյուցեն, փեսեն ինան թակավոր կուգյան մեյ-մեկու տիմաց:

Կուրախնան մեյմընկու վերեն, կառնի կտանի տուն, թակավորի կնիկ ինան ուր ախչիյ կտիսնան, աղորթ որ էն ի: Զեն կինի մեչ քյաղքյին, թե թակավուրու փեսեն շներ հ'արընցուցին, խանին վեր:

Էտ իրիկուն թակավոր ամբ կանի, մեյ դոնամ մ'եմ կանեն քյաղքյի մեջ: Կպաշլայի քյառսուն գյիշեր, քյառսուն ցերեկ խարսնիս: Փեսի քյորն էլ թողե կնայեր ի: Էտ թակավուրու փեսեն

նոր կիմանա, ուր քյոր ինչ օդիաթ իպեր ուր գյըլխուն: Խարսնիս որ կլըմընա, պիտի մեյտեղեն: Մեկ-էրկու ամիս կմնա:

Կէրթա թակավուրուն կասի. - Ես պիտի էրթամ մոտ իմ քյոր, զիկ ամր տու:

Պատրաստութեն կտիսնա, կէլնի շներ կառնի կէրթա: Կինի ճամբախ, կէրթա կխասնի ուր քյուրոչ տուն:

Կասի. - Ջանջիլ կռան:

Կասի. - Աղա, ի՞նչ ի:

Կասի. - Մտնենքյ տան մեչ, դնուն տյու, քյուրոչն էլ ես կպոնեմ:

Կէլնեն վեր էօդեն, մտնեն էօդեն, կտիսնան որ թնքյեր թալիր են մեյ-մեկու գյըլխու վերեն, քյընիր են, կտիսնա էրկու խատ էլ դնու ճաքյ՝ մեչ էրկուս: Ջանջիլ կռան կխասնի դեխ դն, ախպեր կխասնի դեխ քյոր, շներն էլ կխասնեն մեմեկ ճաքյեր կառնեն պերան, կսպանեն, կլմընյուցեն:

Կէլնեն ինչ կանդար աշիա կա, պան կա, կժողվեն, կպառնան Քեռշկոոլին, կինեն ճամբախ, կուգյան: Կուգյան, հալա քյաղքյին չխասած, խաբար կէրթա կխասնի թակավուրուն, թե՝ քյո փեսեն էկավ:

Թակավոր կէլնի ուր մարթերով, չալջիով կուգյա փեսի տիմաց: Կառնի կպիրի տուն: Իրիկուն, խաց ուտելուն, ատաճի անգամ շներաց խաց կկիրցուցի, նորեն ուրենքյ կուտեն:

Ջանջիլ կռան շներաց կասի. - Սեր աղեն ի՞նչ կանդար բախտով էր:

Նոր ինոնքյ կխասնեն ուրենց մուրազին:

Էրկնուց իրեքյ խնձոր ինկյավ. մեյն ասողաց, մեյն լսողաց, մեյն ականջ արողաց: